Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորական եզրակացություն

“ԱՐՑԱԽ ՀԷԿ” ԲԲԸ

31 դեկտեմբերի 2021թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	8
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ

“Four A Consulting” CJSC

audit — accounting — advisory — assurance

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

“Արցախ ՀԷԿ” բաց բաժնետիրական ընկերության խորհրդին և ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել “Արցախ ՀԷԿ” ԲԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված յուրաքանչյուր հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացում, ներկայացված է այդ համատեքստում: Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում, այդ թվում այդ հարցերի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր աուդիտը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը: Մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում ստորև ներկայացված հարցերը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար:

Առանցքային դատողությունները	Մեր իրականացրած գործընթացները
Հասույթի ճանաչում Էլեկտրաէներգիայի վաճառքից և հզորության իրացումից հասույթը եղել է մեր աուդիտի ամենաէական հարցերից մեկը: Մենք այդ ոլորտը դասել ենք ուշադրության կենտրոնում՝պայմանավորված գործարքների էականությամբ, որոնք ներառել են ւ հատուցման գումարի բարդ հաշվարկներ: Հասույթի գործարքների մասին տեղեկատվությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների 9 և 15 ծանոթագրություններում:	Աուդիտի ընթացում մենք իրականացրել ենք հետևյալ ընթացակարգերը. • Մենք վերլուծել ենք հասույթի ճանաչմանն առնչվող հաշվապահական քաղաքականությունները, • Մենք ուսումնասիրել ենք հաճախորդների հետ ընտրված պայմանագրեր՝ հասկանալու գործարքների պայմանները, • Մենք իրականացրել ենք հասույթի ճանաչման գործընթացին առնչվող ներքին հսկողության արդյունավետության ստուգում, • Ընտրանքի հիման վրա՝ մենք համեմատել ենք վաճառքի հաշիվ-ապրանքագրերում արտացոլված գործարքի մասին տեղեկատվությունը պայմանագրի պայմանների հետ, • Մենք գնորդից ստացել ենք հաստատական նամակներ և համեմատել ենք գնորդի կողմից հաստատված վաճառքի ծավալները, տարվա հասույթը և տարեվերջի մնացորդները հաշվապահական գրանցումների հետ, • Անմիջապես տարեվերջից առաջ և տարեվերջից հետո տեղի ունեցած վաճառքի գործարքների համար մենք վերլուծել ենք, թե որ ժամանակաշրջանին է վերաբերում հասույթը, • Մենք վելուծել ենք կատարման պարտավորությունների բավարարումը և վաճառքների պայմանագրերով ճանաչված հասույթը, • Մենք վերլուծել ենք հասույթի մասին տեղեկատվությունը՝ բացահայտված ֆինանսական հաշվետվությունների 15 ծանոթագրությունում:
Տոկոսակիր պարտավորություններ Ընկերությունը ունի էական տոկոսակիր պարտավորություններ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունն ունեցել է 687,927 հազար դրամ ֆինանսավորման և տոկոսային ծախսեր, որը ճանաչվել է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այս հարցը եղել է մեր աուդիտի ամենաէական հարցերից մեկը՝ այդ պարտավորությունների մնացորդների էականության և պարտատոմսերի թողարկման ու վարկային պայմանագրերին հատուկ բարդության պատճառով: Փոխառությունների և դրանց հետ կապված ֆինանսական ծախսերի մասին տեղեկատվությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների 13 և 21 ծանոթագրություններում:	Մեր կողմից իրականացրած ընթացակարգերը ներառել են. • Բանկերից հաստատական նամակների ձեռքբերումը և դրանցում ներկայացված պարտավորությունների մնացորդների, հաշվեգրված տոկոսների, ժամկետների ու պայմանների համեմատությունը հաշվապահական համակարգերում արտացոլված տվյալների հետ, • Ֆինանսավորողների հետ փոխառության պայմանագրերի ուսումնասիրումը՝ վարկային գծերին առնչվող պայմանների հասկացողության համար, • Պարտավորությունների մնացորդների՝ ընթացիկ և ոչ ընթացիկ դասակարգման վերլուծություն, • Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի հաշվետվության մեջ ճանաչած տոկոսի վերահաշվարկ, • Տոկոսակիր պարտավորությունների բացահայտումների վերլուծություն, որոնք ներկայացված են ֆինանսական հաշվետվություններում:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՖՀՄՍ-ների համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ

իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

30 մարտի 2022թ.
Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր-Աուդիտի ղեկավար

«ՀՈՐ Է ԽՈՒՍԼՈՒՆԿ» ՍՊԸ
"FOUR A CONSULTING"
00148693

«ԱՐՑԱԽ ՀԷԿ»ԲԲԸ

2021Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2022

ՁԵՎ № 1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

առ 31.12.2021
(ամսաթիվ, ամիս, տարի)

			ծածկագիրը
Ընկերության անվանումը	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ		50046
Փաստացի գործունեությունը	էլ. էներգիայի արտադրություն		
Հարկ վճարողի հաշվառման համարը			90025315
Պետական ռեգիստրում գրանցման համարը			44313011407
Չափի միավորը			հազ. դրամ
Գտնվելու վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա.	հեռախոսը	954235
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա.	հեռախոսը	954235

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	11 279 654	11 011 806
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020	51 319	5 519
Ոչ նյութական ակտիվներ	030		
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	040		
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050		3 300 633
Հետաձգված հարկային ակտիվներ	060	1 018 166	89 310
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	070	1 193 421	957 358
	071	1 193 421	957 358
	072		
	073		
	074		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	13 542 560	15 364 626
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	090	54 732	59 343
Աճեցվող և բտվող կենդանիներ	100		
Արագամաշ առարկաներ	110	1 155	966
Անավարտ արտադրություն	120		
Արտադրանք	130		
Ապրանքներ	140		
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	90	42 217
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	724 840	444 329
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	232 490	233 951
Այլ դեբիտորական պարտքեր	180	535	2
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	190		701 334
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	200	49 421	120 061
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210	1 533	0
	211		
	212	1 533	
	213		
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	1 064 796	1 602 203
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	14 607 356	16 966 829

Ղեկավար Վահրամ Բեգլարյան

անուն, ազգանուն

Տ.Կ.

Գլխավոր հաշվապահ Արայիկ Դավթյան

անուն, ազգանուն

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	11 536 861	11 536 861
Էմիսիոն եկամուտ	250	501 484	
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	260		
Կուտակված շահույթ	270	-7 541 256	932 530
Պահուստային կապիտալ	280	509 015	1 010 499
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝	290	0	0
	291		
	292		
	293		
Ընդամենը սեփական կապիտալ	**300**	**5 006 104**	**13 479 890**
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	310	8 815 166	3 384 974
Հետաձգված հարկային պարտավորություններ	320		
Ակտիվներին վերաբերող շնորհներ	330		
Ոչ ընթացիկ պահուստներ	340		
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	350	0	0
	351		
	352		
	353		
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**360**	**8 815 166**	**3 384 974**
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	370		
Կարճաժամկետ փոխառություններ	380		
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	17 795	3 111
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400		
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	24 252	39 793
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420		
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	430	59	6
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)	440	695 025	7 592
Այլ կրեդիտորական պարտքեր	450	249	
Եկամուտներին վերաբերող շնորհներ	460		
Ընթացիկ պահուստներ	470		
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	480	48 706	51 463
	481	23 803	21 869
	482	24 903	29 594
	483		
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**490**	**786 086**	**101 965**
ՀԱՇՎԵԿՇԻՌ	**500**	**14 607 356**	**16 966 829**

Ղեկավար _____ Վահրամ Բեգլարյան
անուն, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____ Արայիկ Դավթյան
անուն, ազգանուն

ՁԵՎ № 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31.12.2021
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

			ծածկագիրը
Ընկերության անվանումը	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ		50046
Փաստացի գործունեությունը	էլ. էներգիայի արտադրություն		
Հարկ վճարողի հաշվառման համարը			90025315
Պետական ռեգիստրում գրանցման համարը			44313011407
Չափի միավորը			հազ. դրամ
Գտնվելու վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա.	հեռախոսը	954235
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա.	հեռախոսը	954235

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Նախորդ տարվա միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան
1	2	3	4	5	6
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	3 151 660	2 056 326		
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	-1 007 137	-653 697		
Համախառն շահույթ (վնաս)	030	2 144 523	1 402 629	0	0
Իրացման ծախսեր	040	-1 066	-886		
Վարչական ծախսեր	050	-346 799	-277 014		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	1 796 658	1 124 729	0	0
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	070	**24 529**	**40 225**	0	**0**
	071	24 529	40 225		
	072				
	073				
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	**-12 519**	**-117 691**	0	**0**
	081	-12 519	-117 691		
	082				
	083				
Գործառնական շահույթ (վնաս)	090	**1 808 668**	**1 047 263**	0	**0**
Ֆինանսական ծախսեր	100	-547 861	-687 927		
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	110				
Ընդհատվող գործառնություններ վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	120				
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	-12 111 397	9 046 450	0	0
	131	-12 111 397	9 046 450		
	132				
	133				
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	-10 850 590	9 405 786	0	0
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	150	-5 933	-3 144		
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	-10 856 523	9 402 642	0	0
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	**1 013 186**	**-928 856**		
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	-9 843 337	8 473 786	0	0
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)*	190	-924	796		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)*	200				

* Սույն հոդվածների լրացումը պարտադիր է այն բաժնետիրական ընկերությունների կողմից, որոնց սովորական բաժնետոմսերը կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերը հրապարակայնորեն վաճառվում են, կամ որոնք գտնվում են արժեթղթերի բաց (կանոնակարգվող) շուկայում սովորական բաժնետոմսեր կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսեր բողարկելու գործընթացում: Սույն հոդվածների գումարը գույց է տրվում դրամներով (ոչ թե հազար դրամներով):

Ղեկավար՝ Վահրամ Բեգլարյան
(անուն, ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝ Լյուսիկ Դավթյան
(անուն, ազգանուն)